

Ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման տնտեսական մեխանիզմների զարգացման հեռանկարները Հայաստանում

Ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործումը հանրապետության տարածքում ունի վճռորոշ նշանակություն: Այդ տեսակետից Հայաստանի ջրատնտեսական հաշվեկշիռը, այդ թվում բնակչությանը խմելու ջրով ապահովելու խնդիրը, խիստ լարված է, որը պայմանավորված է ջրային ռեսուրսների օգտագործման նոր ընդունված համալիր հայեցակարգի աստիճանական կիրառմամբ, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի ցածր մակարդակով:

Հանրապետության ջրատնտեսական հաշվեկշռի լարվածության թուլացմանը նպաստող առաջնահերթ գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն ջրային ռեսուրսների մեծածավալ կորուստների կանխարգելմանը, այդ թվում՝

- Ջրամբարների նորոգմանը, կոլեկտորադրենաժային ցանցերի շահագործմանը, ինքնահոս հորատանցքերի փակային ռեժիմի բերման աշխատանքների ապահովմանը
- Ոռոգման ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, ջրհան կայանների և խորքային հորերի վերանորոգման աշխատանքների ապահովմանը
- Նոր ջրամբարների, հիմնականում փոքր և տեղային նշանակության, կառուցմանը և շահագործմանը

Հանրապետության ջրային ռեսուրսների պահպանության գործում առաջնահերթ խնդիրներ են հանդիսանում նաև աղտոտման աղբյուրների ժամանակին բացահայտումը, դադարեցումը և հետագա կանխարգելումը: Հայտնի է, որ Հայաստանի հիդրոէկոհամակարգերի էվտրոֆացման և աղտոտման հիմնական պատճառ են հանդիսանում գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը, որոնց բացասական ազդեցության հետևանքների վերացմանը կամ մեղմացմանը նպատակաուղղված միջոցառումները պետք է ընդգրկեն՝

- Կեղտաջրերի մաքրման ժամանակակից տեխնոլոգիաների աստիճանական ներդրումը
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ծրագրով նախատեսված գործողությունների իրականացումը
- Ջրային աղբյուրների սանիտարական նորմերի պահպանումը
- Հանքային պարարտանյութերի օգտագործման սահմանափակումը
- Ջրային ռեսուրսների մոնիթորինգի անխափան իրականացումը
- Սանիտարական գոտիների ցանցի ընդլայնումը և այդ բնագավառում համապատասխան ծառայությունների գործունեության անխափան ապահովումը

Ներկայումս ջրօգտագործման վճարների արդյունավետությունը ցածր մակարդակի վրա է, որը պայմանավորված է ջրօգտագործողների կողմից ջրի վարձի թերավճարումներով(գանձելիության մակարդակը չի գերազանցում 30%ը):

Ջրամատակարարման ուղղությամբ բարեփոխումները, ջրօգտագործման վճարների հավաքագրման և ջրային ավազան արտանետվող վնասակար նյութերի համար գանձվող վճարների մակարդակի բարձրացումը ապահովելու համար անհրաժեշտ է՝

- Կանխել ջրօգտագործման գործընթացում առկա ջրի կորուստների մեծ ծավալը
- Կատարելագործել ջրօգտագործման փաստացի ծավալների չափագրման տեխնիկական և կազմակերպչական բնույթի հարցերը
- Պարզեցնել ջրօգտագործման գծով թույլատվությունների տրամադրման մեխանիզմը՝ ապահովելով դրա թափանցիկությունը

Ջրային ռեսուրսների ոլորտում տնտեսական մեխանիզմների կատարելագործման և արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներն են՝

- Կառուցվածքային բարեփոխումների միջոցով բարձրացնել կառավարման, շահագործման և պահպանման արդյունավետությունը
- Ինքնահոս համակարգերի կառուցման միջոցով իջեցնել ջրի ինքնարժեքը և տնտեսված գումարները ուղղել համակարգերի պահպանմանը
- Ջրանցքների վերականգնման միջոցով պակասեցնել ջրի կորուստները
- Ոռոգման առաջավոր մեթոդների կիրառման միջոցով պակասեցնել ջրօգտագործման ծավալները

Բնօգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործումը

Հայաստանում առկա էկոլոգիական իրավիճակը բարելավելու, բնության վրա տնտեսության ծանրաբեռնվածությունը մեղմացնելու և այլ բնապահպանական հիմնահարցերը լուծելու համար, առաջնահերթ կարգով և առաջնահերթ ծավալով պետք է իրականացվեն համապատասխան բնապահպանական միջոցառումներ, վայրի նպատակաուղղված բնապահպանական քաղաքականություն՝ նպատակ ունենալով ապահովել՝

- Հայաստանի ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում
- Ջրային ռեսուրսների վերարտադրության և դրանց չվերականգնվող մասի գծով օգտագործման սահմանափակում
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանական նվազեցում՝ մինչև էկոլոգիապես թույլատրելի սահմանը
- Ջրօգտագործումից ստացվող պետական եկամուտների զգալի աճ

Այդ նպատակների համար պետք է՝

1. Իրականացնել ջրային ռեսուրսների հաշվառման և տնտեսական գնահատման համակարգի բարեփոխում, կատարելագործվեն ջրօգտագործման լիմիտավորման և լիցենզավորման համակարգերը
 2. Կատարելագործվեն ջրային ռեսուրսների վերարտադրության և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորման մեխանիզմները, ապահովվի այդ ոլորտներում աշխատանքների և ծառայությունների շուկայի ձևավորումը և հետագա զարգացումը
 3. Ապահովվի ռազմավարական նշանակության և խիստ դիֆիցիտային ջրային ռեսուրսների կանխատեսման, որոնման և գնահատման աշխատանքների իրականացում, դրանց ծավալների աստիճանական ավելացում, իսկ ձևերի՝ հետագա կատարելագործումը
 4. Ապահովվի բնական ռեսուրսների ուսումնասիրության, վերարտադրության, օգտագործման և պահպանության նոր մեթոդների և տեխնոլոգիաների զարգացում
- Ջրային ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների և դրանց օգտագործման վճարովիության սկզբունքների ու վարձաչափերի որոշման կամ սահմանման մեխանիզմների կատարելագործումը էականորեն նպաստում է ջրային ռեսուրսների կայուն օգտագործմանը, վերջիններիս վերարտադրությանը ու ջրային միջավայրի պահպանմանը: